

ՈԼՍՈԼԳՄԱՆ ՈԼԻԵԳՈԼԿ

4

Փորձություններ

Նախապատրաստվել և պատասխանել փորձություններին



Խմբային ոլսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Փորձություններ

Նախապատրաստվել և պատասխանել փորձություններին

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցման ուղեցույց

5-րդ խմբագրում



Փորձություններ

Ուսուցման ուղեցույց
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հոչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Temptation, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Վերջին անգամ վերանայվել է. 09-2017

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 1

Ամիս, ամսաթիվ _____

Փորձությունն Աստվածաշնչում

1. Աստված մարդկանց ենթարկո՞ւմ է մեղքի փորձության (Հակոբոս 1:13)_____

2. Ո՞վ է մարդկանց ենթարկում մեղքի փորձության (Ո՞վ փորձեց Հիսուսին, որ Նա մեղք գործի):
Կարդա՛ Մատթեոս 4:1-11 _____

3. Ի՞նչ է տեղի ունենում, երբ մարդը զիջում է մեղքի փորձությանը:
Կարդա՛ Հակոբոս 1:15 _____

4. Ինչպե՞ս կարող է մարդը հաղթահարել փորձությունը (Պատասխան երկու մասով): Կարդա՛ Հակոբոս 4:7:
Ա. _____
Բ. _____

5. Ի՞նչ խորհուրդ է տալիս մեզ Ա Թեսաղոնիկեցիների 5:22-ը այն բաների վերաբերյալ, որոնք պատճառ են դառնում, որ ենթարկվենք փորձության:
Կարդա՛ Կողոսացիների 3:1-2:

6. Ի՞նչ պետք է մենք մտածենք, երբ փորձության մեջ ենք գտնվում:
Կարդա՛ Կողոսացիների 3:1-2:

7. Կարդա՛ Մատթեոս 4:1-11: Տե՛ս այն երեք բաները, որ սատանան փորձեց Հիսուսին անել տալ: Յուրաքանչյուր փորձության վերաբերյալ հարցերին պատասխանելիս «Մատթեոս _____»-ի կողքին գրի՛ր համապատասխան համարը:

Առաջին փորձություն. Մատթեոս _____

Ա. Ի՞նչ փորձեց սատանան Հիսուսին անել տալ:

Փորձություն

Նախագիծ 1, էջ 2

7. Հիսուսի փորձությունները (շարունակելի)

Բ. Ի՞նչ կարիք էր սատանան առաջարկում բավարարել:

Երկրորդ փորձություն. Մատթեոս _____

Ա. Ի՞նչ փորձեց սատանան Հիսուսին անել տալ:

Բ. Ի՞նչ կարիք էր սատանան առաջարկում բավարարել:

Երրորդ փորձություն. Մատթեոս

Ա. Ի՞նչ փորձեց սատանան Հիսուսին անել տալ:

Բ. Ի՞նչ կարիք էր սատանան առաջարկում բավարարել:

8. Քո կյանքի ո՞ր ասպարեզներում ես դու ամենաշատը փորձվում:

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 2

Ամիս, ամսաթիվ _____

Տարբերել սեփական փորձությունները

1. Ցուցակագրի՝ ը այն հիմնական փորձությունները, որոնց դու հանդիպում ես քո կյանքում:

2. Հիշի՛ր վերջին մի քանի դեպքերը, երբ դու հանդիպել ես մեղքի փորձության: Ընտրի՛ր չորս օրինակ և պատասխանի՛ր հետևյալ հարցերին: **Հիշե՛ք.** յուրաքանչյուր օրինակի 4-րդ և 5-րդ հարցերին կարիք չկա պատասխանելու՝ նախքան *Փորձություն* դասընթացի առաջին դասարանն ավարտելը:

Օրինակ 1.

1. Ամիս, ամսաթիվ _____ Ժամանակ _____ Վայր _____

2. Մասնակիցներ _____

3. Համառոտ պատմի՛ր, թե ինչ տեղի ունեցավ: _____

4. Ի՞նչ էր սատանան փորձում քեզ բավարարել տալ, կարի՞ք, թե՞ ցանկություն:

5. Ի՞նչ կարիք կամ ցանկություն էր դա: _____

Օրինակ 2.

1. Ամիս, ամսաթիվ _____ Ժամանակ _____ Վայր _____

2. Մասնակիցներ _____

3. Համառոտ պատմի՛ր, թե ինչ տեղի ունեցավ: _____

Փորձություն

Նախագիծ 2, էջ 2

Օրինակ 2. (շարունակելի)

4. Ի՞նչ էր սատանան փորձում քեզ բավարարել տալ, **կարի՞ք**, թե՞ **ցանկություն**:

5. Ի՞նչ կարիք կամ ցանկություն էր դա: _____

Օրինակ 3.

1. Ամիս, ամսաթիվ _____ Ժամանակ _____ Վայր _____

2. Մասնակիցներ _____

3. Համառոտ պատմի՛ր, թե ինչ տեղի ունեցավ: _____

4. Ի՞նչ էր սատանան փորձում քեզ բավարարել տալ, **կարի՞ք**, թե՞ **ցանկություն**:

5. Ի՞նչ կարիք կամ ցանկություն էր դա: _____

Օրինակ 4.

1. Ամիս, ամսաթիվ _____ Ժամանակ _____ Վայր _____

2. Մասնակիցներ _____

3. Համառոտ պատմի՛ր, թե ինչ տեղի ունեցավ: _____

4. Ի՞նչ էր սատանան փորձում քեզ բավարարել տալ, **կարի՞ք**, թե՞ **ցանկություն**:

5. Ի՞նչ կարիք կամ ցանկություն էր դա: _____

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 3

Ամիս, ամսաթիվ _____

Իմ կարիքները և ցանկությունները

Այս Նախագծի նպատակն է՝ ուսումնասիրել այն կապը, որ մեր կարիքներն ու ցանկություններն ունեն փորձությունների հետ: Ուսանողական ձեռնարկի 8-13-րդ էջերը վերաբերում են այս նույն թեմային: Եթե ուզում ես, կարող ես նայել Ուսանողի ձեռնարկը և քո դասարանի նշումները, երբ վերջացնես այս Նախագիծը:

1. Այս դասընթացին մենք սահմանեցինք փորձությունները՝ որպես ժամանակներ, երբ սատանան փորձում է քեզ, որպեսզի խախտես Աստծո օրենքները՝ քո կյանքում որևէ կարիք կամ ցանկություն բավարարելու համար:

Ա. Գրի՛ր մի սահմանում, թե ի՛նչ է «կարիքը» _____

Բ. Գրի՛ր մի սահմանում, թե ի՛նչ է «ցանկությունը» _____

Գ. Բացատրի՛ր այս երկուսի միջև եղած տարբերությունը:

2. Ցուցակագրի՛ր քո կյանքի հիմնական **կարիքները**, որոնք սատանան օգտագործել է քեզ փորձելու համար: Դու կարող ես նաև ավելացնել ուրիշ կարիքներ էլ, որոնք, քո կարծիքով, ապագայում սատանան կփորձի օգտագործել որպես փորձության կետեր:

3. Ցուցակագրի՛ր քո կյանքի հիմնական **ցանկությունները**, որոնք սատանան օգտագործել է քեզ փորձելու համար: Դու կարող ես նաև ավելացնել ուրիշ ցանկություններ էլ, որոնք, քո կարծիքով, ապագայում սատանան կփորձի օգտագործել որպես փորձության կետեր:

Փորձություն

Նախագիծ 3, էջ 2

4. Սատանայի սիրելի ստերից մեկն է, երբ նա քեզ փորձում է քո կյանքի իրական կարիքներից մեկի ասպարեզում և ասում, որ դու պետք է առաջ գնաս և քո կարիքը բավարարես հենց տվյալ պահին, իր ձևով: Աստվածաշունչը հստակ մատնանշում է, թե ինչ է Աստված խոստացել անել մեր կարիքների վերաբերյալ: Կարդա՝ Փիլիպպեցիների 4:19:

Ա. Ի՞նչ է ասում այս համարը, որ Աստված կանի:

Բ. Ինչպե՞ս կարող է այս համարը քեզ օգնել, երբ դու փորձության մեջ ես:

Գ. Եթե դու ունես իրական կարիք, և Աստված այն չի բավարարել, ի՞նչ պետք է անես: Ի՞նչ է այն քեզ ասում Աստծո մասին:

Հարցեր հետագա ուսումնասիրության համար

5. Նոր Կտակարանը մեզ շատ պատկերներ է տալիս Պողոս առաքյալի կյանքից: Կարդա՝ Փիլիպպեցիների 4:10-13 և Ա Տիմոթեոս 6:6-10:

Ի՞նչ կարևոր դասեր սովորեց Պողոսը, որն իրոք օգնեց նրան, երբ հանդիպեց փորձությունների: Ինչպե՞ս կարող են Պողոսի սովորած այս դասերը քեզ օգնել, երբ դու հանդիպես փորձությունների:

6. Կարդա՝ Մատթեոս 6:24-34:

Ա. Ըստ Մատթեոս 6:33-ի՝ ի՞նչ է Աստված մեզ ասում, որ անենք, որպեսզի մեր կարիքները բավարարված տեսնենք:

Բ. Մատթեոս 6:33-ն ասում է «այս բաների մասին», որ քննարկվել էին Մատթեոս 6:25-32-ում: Անցի՛ր այդ համարներով և ցուցակագրի՛ր այդ քննարկված կարիքներն ու ցանկությունները: Դրանք գրելուց հետո նշի՛ր՝ արդյոք այն կարի՞ք է, թե՞ ցանկություն:

7. Կարդա՝ Սաղմոս 37:1-11:

Ա. Ի՞նչ է Աստված քեզ խոստանում տալ համար 4-ում:

Բ. Ի՞նչ պայմաններ է Աստված փնտրում քո կյանքում՝ նախքան քո սրտի ցանկությունները կատարելը: Տե՛ս 1-11-րդ համարները:

8. Աստված երբեք չի խոստացել, որ կբավարարի մեր կարիքներն ու ցանկությունները, եթե մենք ասենք, որ ուզում ենք, որ դրանք բավարարվեն: Երբեմն՝ Նա մեզ սպասեցնում է: Կարդա՝ Բ Օրինաց 8:1-3:

Ա. Ըստ 2-րդ համարի՝ ինչու՞ է Աստված դժվարություններ ու նեղություններ ուղարկել նրանց կյանքում:

Բ. Կարդա՝ 3-րդ համարը: Հետո կարդա՝ Մատթեոս 4:1-11: Աստծո ի՞նչ կարևոր ճշմարտություն է այս երկու համարներում պարզաբանվում:

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 4

Ամիս, ամսաթիվ _____

Ինչպե՞ս էին Աստվածաշնչի հերոսները

հաղթահարում իրենց փորձությունները

Ընտրի՛ր ներքևում նշված աստվածաշնչյան հատվածներից մեկը և պատասխանի՛ր այս Նախագծի բոլոր հարցերին: Յուրաքանչյուր հարցին պատասխանելիս գրի՛ր այն համարների թիվը (թվերը), որտեղից վերցնում ես քո պատասխանը, օրինակ՝ 10-րդ համարը: Պատասխանները գրի՛ր քո բառերով:

Նշի՛ր այն հատվածի դիմաց, որը դու ընտրում ես:

_____ Դանիել 1, Դանիելը և նրա երեք ընկերները:

_____ Դանիել 3, Սեդրակ, Միսակ և Աբեղնագով:

_____ Ծննդոց 39, Հովսեփը Եգիպտոսում:

_____ Մատթեոս 26, կամ _____ Մարկոս 14, կամ _____ Դուկաս 22, Պետրոսն ուրանում է Քրիստոսին:

_____ Ծննդոց 3, Ադամ և Եվա:

1. Ի՞նչ մեղքի փորձության հանդիպեց այս անձնավորություն(ներ)ը:

Համարը՝ _____

2. Ի՞նչ կարիք կբավարարեր այն նրա(նց) կյանքում: Համարը՝ _____

3. Ձիջե՞ց այս անձնավորություն(ներ)ը մեղքի փորձությանը: _____

4. Որո՞նք էին նրա(նց) գործողությունների հետևանքները: Ի՞նչ տեղի ունեցավ, երբ նա (նրանք) զիջեց(ին) կամ դեմ կանգնեց(ին) փորձությանը: Համարը՝ _____

Փորձություն

Նախագիծ 4, էջ 2

5. Եթե այս անձնավորություն(ներ)ը դեմ կանգնեց(ին) փորձությանը, ապա ինչպե՞ս նա(նրանք) դա արեց(ին): Նկարագրի՛ր այն գործողությունները, որոնք նա (նրանք) արեց(ին), որպեսզի դեմ կանգներ(կանգնեին) փորձությանը:

Համարը՝ _____

6. Եթե այդ անձնավորություն(ներ)ը զիջեց(ին) փորձությանը, պատասխանի՛ր այս հարցին. Ի՞նչ տկարություններ ուներ (ունեին) այս անձնավորություն(ներ)ը Աստծո հետ իր(ենց) փոխհարաբերությունների մեջ:

Համարը՝ _____

7. Իրենց կյանքի ո՞ր ասպարեզներում այդ մարդը (մարդիկ) կարիք ունի(ունեն) աճելու, որպեսզի մյուս անգամ կարողանա(ն) դեմ կանգնել փորձությանը:

Համարը՝ _____

8. Եթե դու լինեիր այդ անձնավորության տեղը, ինչպե՞ս կարձագանքեիր նման իրավիճակին: Բացատրի՛ր քո պատասխանը:

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 5

Ամիս, ամսաթիվ _____

Նոր հայացք հին փորձություններին

Այս Նախագիծը համատեղ է այն աշխատանքին, որ դու արեցիր Նախագիծ 2-ում: Վերանայի՛ր Նախագիծ 2-ում քո բերած օրինակները: Այնուհետև դարձյալ վերանայի՛ր աստվածաշնչյան այն պատկերը, որ մենք ուզում ենք օգտագործել մեզ հանդիպող փորձությունները հաղթահարելու հարցում (տե՛ս փորձությունները հաղթահարելու 6 քայլերը Ուսանողի ձեռնարկի 16-րդ էջում): Մի քանի բույս երևակայի՛ր: Պատկերացրո՛ւ, որ դու կրկին հանդիպում ես նույն փորձություններին այն տարբերությամբ, որ հիմա օգտագործում ես այս նոր պատկերը: Ընտրի՛ր այն օրինակներից երկուսը, որոնք օգտագործեցիր Նախագիծ 2-ում:

Օրինակ 1.

1. Գրի՛ր, թե ինչպես կարող էիր օգտագործել այս նոր աստվածաշնչյան պատկերն այդ իրավիճակի մեջ: Պատմի՛ր, քո կարծիքով ի՛նչ կարող էր պատահել քեզ և մյուս ներգրավված մարդկանց հետ:

2. Ինչպե՞ս կվարվեիր դու: Ի՞նչ տարբեր մտքեր և գործողություններ կկարողանայիր օգտագործել:

Փորձություններ
Նախագիծ 5, էջ 2

3. Ինչպե՞ս քո այս նոր պատասխանը կփոխեր այն հետևանքները, որ տեղի ունեցան:

Օրինակ 2.

1. Գրի՛ր, թե ինչպես կարող էիր օգտագործել այս նոր աստվածաշնչյան պատկերն այդ իրավիճակի մեջ: Պատմի՛ր, քո կարծիքով ի՛նչ կարող էր պատահել քեզ և մյուս ներգրավված մարդկանց հետ:

2. Ինչպե՞ս կվարվեիր դու: Ի՞նչ տարբեր մտքեր և գործողություններ կկարողանայիր օգտագործել:

3. Ինչպե՞ս քո այս նոր պատասխանը կփոխեր այն հետևանքները, որ տեղի ունեցան:

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 6

Ամիս, ամսաթիվ _____

Օգտագործել նոր պատկերը փորձությանը պատասխանելու համար

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը քննարկելիս մենք խոսեցինք նոր աստվածաշնչյան պատկեր զարգացնելու վերաբերյալ, որպեսզի այն օգտագործենք փորձության մեջ եղած ժամանակ: Նորից քեզ ենք ներկայացնում այն վեց հիմնական քայլերը, որոնք ներառված են այդ պատկերի մեջ:

Փորձությունը հաղթահարելու 6 քայլեր

1. Գիտակցի՛ր, որ փորձության մեջ ես:
2. Ասա՛ «Ո՛չ» փորձությանը:
3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:
4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ մղել, որ բավարարեմ»:
5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ճանապարհը:
6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Ուսանողի ձեռնարկ, էջ 16

Փորձի՛ր կիրառել այս աստվածաշնչյան պատկերը, երբ հաջորդ մի քանի օրերում փորձության մեջ լինես: Երբ դու կկիրառես նշված նոր պատկերը, լրացրո՛ւ այս Նախագիծը:

1. Ի՞նչ մեղքի փորձության էիր դու հանդիպել:
2. Ամիս, ամսաթիվ _____ Ժամանակ _____ Վայր _____
3. Ներգրավված մարդիկ _____
4. Համառոտ նկարագրի՛ր, թե ինչ տեղի ունեցավ. օգտագործի՛ր այս 6 քայլերը մեր աստվածաշնչյան պատկերից և բացատրի՛ր, թե ինչ կատարվեց, երբ դու փորձեցիր դրանք օգտագործել: Օրինակ, երբ նկարագրելիս լինես Քայլ 1-ը՝ «Գիտակցի՛ր, որ դու փորձության մեջ ես», գրի՛ր, թե երբ և ինչպես գիտակցեցիր, որ փորձության մեջ ես: Պատմի՛ր, թե ո՞րն էր քո առաջին արձագանքը: Արդյո՞ք անմիջապես անցար Քայլ 2-ին:

Քայլ 1. Գիտակցի՛ր, որ դու փորձության մեջ ես

Ես օգտագործեցի չօգտագործեցի այս քայլը (օղակի մեջ վերցրո՛ւ մեկը):

Իմ կարծիքը.

Փորձություն

Նախագիծ 6, էջ 2

Քայլ 2. Ասա՛ «Ո՛չ» փորձությանը:

Ես օգտագործեցի չօգտագործեցի այս քայլը (օղակի մեջ վերցրո՛ւ մեկը):
Իմ կարծիքը.

Քայլ 3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:

Ես օգտագործեցի չօգտագործեցի այս քայլը (օղակի մեջ վերցրո՛ւ մեկը):
Իմ կարծիքը.

Քայլ 4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սաստանան փորձում ինչ մղել, որ բավարարեմ:

Ես օգտագործեցի չօգտագործեցի այս քայլը (օղակի մեջ վերցրո՛ւ մեկը):
Իմ կարծիքը.

Փորձություն

Նախագիծ 6, էջ 3

Քայլ 5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ճանապարհը

Ես օգտագործեցի չօգտագործեցի այս քայլը (օղակի մեջ վերցրո՛ւ մեկը):
Իմ կարծիքը.

Քայլ 6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Ես օգտագործեցի չօգտագործեցի այս քայլը (օղակի մեջ վերցրո՛ւ մեկը):
Իմ կարծիքը (գրի՛ր, թե ինչ նպատակներ ես դրել, որոնք կարող են քեզ օգնել քո կարիքներն Աստծո ասած ձևով բավարարելու համար, և պատմի՛ր, թե ինչ առաջընթաց ես ունեցել քո նպատակներին հասնելու գործում: Ինչքանո՞վ են արդյունավետ եղել այդ նպատակները քո կյանքում տվյալ կարիքը բավարարելու հարցում):

5. Այս պատկերի ո՞ր հատվածներն էին ամենահեշտ կիրառելի: Բացատրի՛ր:

Փորձություն

Նախագիծ 6, էջ 4

6. Այս պատկերի ո՞ր հատվածներն էին ամենադժվար կիրառելի: Բացատրի՛ր:

7. Ի՞նչ սովորեցիր այս փորձությունից: Ի՞նչը դու պետք է այլ կերպ անես, երբ հաջորդ անգամ հանդիպես նույն փորձությանը:

Անուն _____

Փորձություն

Դասարան _____

Նախագիծ 8

Ամիս, ամսաթիվ _____

Նախապատրաստվել փորձությանը

Այս Նախագծի նպատակն է՝ նախապատրաստել քեզ այն փորձության համար, որին բավականին հաճախ ես հանդիպում: Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը մանրամասնորեն քննարկում է, թե ինչ կարող ես անել փորձություններին նախապատրաստվելու համար: Եթե ուզում ես, կարող ես վերանայել Ուսանողի ձեռնարկի այդ հատվածը՝ նախքան այս Նախագծի վրա աշխատելը:

1. Ընտրի՛ր մի փորձություն, որը դու ուզում ես օգտագործել այս Նախագծի համար: Ընտրի՛ր մի փորձություն, որին դու հաճախ ես հանդիպում: Համառոտ նկարագրի՛ր այդ փորձությունը:

2. Նախքան այս Նախագծի ամբողջ աշխատանքին անցնելը ժամանա՛կ հատկացրու աղոթելու Աստծուն այս փորձության վերաբերյալ: Աստծուց իմաստություն ինդրիր, թե ինչպես հաջողությամբ դեմ կանգնես այս փորձությանն ամեն անգամ, երբ գա: Որոշո՛ւմ կայացրու Աստծո առաջ՝ օգտագործել այս փորձությունը որպես միջոց՝ ավելի մոտենալու Նրան:

3. Ի՞նչ ցանկություն կամ կարիք է սատանան քեզ փորձում մղել, որ բավարարես: Գրի՛ր այդ, իսկ հետո գրի՛ր «ցանկություն» կամ «կարիք» բառը՝ ցույց տալու, թե ինչ ես զգում դրա վերաբերյալ: Եթե մեկից ավելի ցանկություններ կամ կարիքներ կան, որոնցից սատանան կառչում է, ուրեմն գրի՛ր դրանք բոլորը:

Փորձություն

Նախագիծ 8, էջ 2

4. Ի՞նչ ունի Աստված ասելու այս փորձության և դրա մեջ ներառված կարիք(ներ)ի և ցանկություն(ներ)ի վերաբերյալ: Մուրբ Գրքում գտի՛ր առնվազն երեք համարներ, որոնք խոսում են այդ մասին: Ընտրի՛ր համարներ, որոնք քո կարծիքով կօգնեն քեզ հասկանալ, թե ինչպես կարող ես հաջողությամբ հաղթահարել այս փորձությունը: Գրի՛ր այդ երեք համարները, իսկ հետո բացատրի՛ր, թե ինչպես ես դու զգում, որ դրանցից յուրաքանչյուրը կարող է քեզ օգնել այս փորձության հարցում: Լրացուցիչ թո՛ւղթ օգտագործիր ավելի շատ համարների համար:

Ա. Համարը՝ _____

Ինչպե՞ս կարող է այս համարն ինձ օգնել: _____

Բ. Համարը՝ _____

Ինչպե՞ս կարող է այս համարն ինձ օգնել: _____

Գ. Համարը՝ _____

Ինչպե՞ս կարող է այս համարն ինձ օգնել: _____

Փորձություն

Նախագիծ 8, էջ 3

5. Խոսի՛ր մեկ այլ քրիստոնյայի հետ: Իմացի՛ր, գուցե նա նույնպես հանդիպել է այն նույն փորձությանը, որը դու օգտագործում ես այս Նախագծի համար: Եթե այդ անձնավորությունը հանդիպել է նույն փորձությանը, հարցրո՛ւ, թե ինչ է նա արել այն հաղթահարելու համար: Եղե՛լ են Սուրբ Գրքի համարներ, որոնք օգնել են նրան՝ հասկանալ այս կարիքը բավարարելու Աստծո ասած ձևը: Գրի՛ր այն բոլոր օգտակար խորհուրդները, որոնք նա քեզ կտա:

6. Գրի՛ր այս կարիքն Աստծո ասած ձևով բավարարելու առնվազն չորս հնարավոր տարբերակներ: Հնարավորության դեպքում օգտագործի՛ր Սուրբ Գրքից համարներ՝ հիմնավորելու քո պատասխանները: Մի՛ գրիր. «Ես կաղոթեմ դրա համար»: Ենթադրում ենք, որ ամեն մեկն էլ կաղոթի և Աստծուց օգնություն կլինդի փորձությունները հաղթահարելու համար: Գրի՛ր այն հատուկ քայլերն ու գործողությունները, որ կարող ես անել, և որոնք քեզ կօգնեն հագեցնել քո կարիքներն ու ցանկությունները: Եթե դու այս Նախագծի համար երեքից ավել ցանկություններ ու կարիքներ ես գրել 1-ին էջի #3 հարցի առումով, ուրեմն քո յուրաքանչյուր պատասխանի համար նշո՛ւմ արա, որպեսզի երևա, թե ո՛ր ցանկության կամ կարիքի մասին ես խոսում:

1. _____

2. _____

3. _____

4. _____

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը _____ Փորձություններ _____

Հարցաշար

Անգիր համարներ

Ամսաթիվ

- | | | |
|---|-------|-------|
| 1 | _____ | _____ |
| 2 | _____ | _____ |
| 3 | _____ | _____ |

Նախագծեր

Ամիս, ամսաթիվ

- | | |
|---|-------|
| 1 | _____ |
| 2 | _____ |
| 3 | _____ |
| 4 | _____ |
| 5 | _____ |
| 6 | _____ |
| 7 | _____ |
| 8 | _____ |
| | _____ |
| | _____ |
| | _____ |

Ստուգարք

Ամսաթիվ _____